դուրս են բերել զցել էս չուրբը, ո՞ւմ համար ի՞նչի համար:

2. ԶինՎ.—ձիչտ ա ասում. իրանք տեղներումը հանգիտտ պառկել
են, իսկ մեզ բերել են էս կամուրջի կողքին զշեր-ցերեկ
կանգնեցրել և հրամայել, վոր յեթե կարմիր բանակը
կշարժվի, զինամիտը արաքացիներ կամուրջը թող պա-
թի, վոր նրանք չկարողանան դալ: Գալիս են թող դան,
առն ու տե՞ղս են խլելու, թե բաղ ու բաղչես, վերցրու
խմենք (խմում են):

ԱՐՏԱՇ.—Բայց յես ելի լավ չհասկացա. կամուրջի տակը ասում
էր զինամիտ ա գրած:

2. ԶինՎ.—Են ել վո՞նց... պոստի կողքի են մեծ քարը հա տեսել էս.

ԱՐՏԱՇ.—Ինչպես չե, են որը վոր դու նրա վրա նստած ելիր,
յեկա անցնելու՝ չթողիր:

2. ԶինՎ.—Ետա վոր կա... զինամիտի պատրույքի մի ծերը ետ
քարի տակն ա. սղիչկա վոր կպցրիր՝ ել պրծավ. կա-
մուրջը բորուլի պես ողը կը թռնի, նրանից հետո գնա
կամուրջի տեղը թեկույ բոստան ցանի... ասա՞ց գրուտտ
ա ետ բանը յես քեզ չեյի ասի, հիմի կասեմ... բայց տես
վոր դու ուրիշին չասես, գաղանիք ա:

ԱՐՏԱՇ.—Ի՞նչ էս ասում... լսենց բանն ուրիշի սկի տակ կլինի:

1. ԶինՎ.—Վեր կաց զնանք... վտաի ձեն լավից. հանկարծ պարու-
չիկը չդա:

ԱՐՏԱՇ.—ձիչտ ա ասում... վեր կացիք զնացիք... նա վոր դա
կտեսնի, ձեզ համար ել վիս կլինի, ինձ համար ել...
(Պատրաստվում են դուրս գնալ. ներս է մտնում սպան):

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնիք և սպան

ՍՊԱ.—(Դուրսը կապած) Այս ի՞նչ է նշանակում զուք
ինչպես եք համարձակվում ձեր պոստը թողնել և դալ այս-
տեղ... չուն չան վորդիք (ապտակում է նրանց մի բանի ան-
գամ), դուրս կորե՞ք: Յես ձեզ հետ հետո կխոսեմ... (զին-
վորները գնում են): Արտաշ, դու լավ բան չես անում, վոր
նրանց թույլ ես տալիս դան այստեղ հարեցողություն
սրարապեն... սա նշանակում է, վոր դու կտառվարություն

և որենքի հակառակ դործ են բռնում... զինվորական կար-
գապահությունը, յերեվի, դոն չես հասկանում:

ԱՐՏԱՇ.—Դե լավ, ինձ վոր ասում էս յես ի՞նչ անեմ... յես հո
չդնացի նրանց դոռով բերի: Իրանք յեկան: Ինչե՞ ելին
դալի, թող չդալին, ով եր նրանց խնդրում: Գալիս են
դուր տեղն ուրիշին կրակի մեջ զցում... դե, ասենք, մի
մեծ հանցանք ել չի կատարվել... եկան ասին, թե մըր-
սում ենք, մի ստաքան արաղ տուր. յես ել վերցրի ավի:
Խեղճ աղերք են, ասի՝ թող խմեն:

ՍՊԱ.—Քո սխալն ել հենց դրանումն է կայանում, վոր դու նրանց
խզճացել էս: Չպետք է խզճայիր:

ԱՐՏԱՇ.—Յես չեմ հասկանում, էս բռնաբար ել ի՞նչի համար ա,
յեթե իմ մուշտարին ել դարդակ հետ պիտի դառնա, ել
ինչի եմ զերզի ու նալոզի փողը տալիս. ինչ ա... դուք
կարծում եք, եզ փողը ինձ համար յերկնքից ա թափ-
վում, թե ձեզ պես հայրական ժառանգություն եմ ստա-
ցել. յես քյասիր մարդ եմ, զիշեր ցերեկ տանջվում-
չարչարվում եմ, վոր մի քանի կուպեկ փող աշխատեմ,
տանեմ ընտանիքս կերակրեմ:

ՍՊԱ.—Իսկ ով ա քեզ արգելում, աշխատիր...

ԱՐՏԱՇ.—Թողնում եք, վոր աշխատեմ. ամեն բոպե խանդարում
եք... չե, ախպեր, համն ու լաղաթը փախավ. ել սրանից
հետո ետեղ մնացողը չեմ... եզուց մյուս որը մի բան ել
վոր պատահի, դե արի ու ելը ցերիցը հանի... եզուց-
վանից յես իմ փառափուսեն կհավաքեմ, կգնամ... (շշերն
արագ-արագ հավաքում է):

ՍՊԱ.—Եղ ի՞նչ էս անում...

ԱՐՏԱՇ.—Ինչ պերք է անեմ, փառափուսեն հավաքում եմ:

ՍՊԱ.—Վախեցա՞ր:

ԱՐՏԱՇ.—Ախր ենպես բան եք անում, վոր չվախենամ... բա յես
կտառվարության հակառակվող կամ թե որենքի գեմ զնա-
ցող մարդ եմ. քսան տարի յես Հովարարումն եմ մնա-
ցել Ծանթաղումն եմ մեծացել... զնացեք, ումն ուղում
եք հարցրեք, Թիֆլիզում ինձ մեծից պատիկ ամենքը ճա-
նաչում են... նրանք կտեսն, թե յես ի՞նչ տեսակ մարդ
եմ:

ՍՊԱ.—Դա աշխարհ ել հետաքրքիր չի. մի չիշ կոնյակ բեր:

ԱՐՏԱՇ.—Ձեմ բերի... բռնաբար չեմ. էս սրվանից յես նրա վերջը
տվի:

ՍԳԱ.— Դե լավ, հիմարութիւն մի անի. խմել եմ ուզում:

ԱՐՏԱՇ.— Այ տեսնում ես, կառավարութեան որենքը և զինվորական դիտարկութեան դուք ինքներդ եք խախտում և հետո դաժիս ուրիշին եք մեղադրում:

(Մի շիշ կոնյակի իր գանդակով բերում դնում է նրա առաջ): Վոր չտամ՝ պտեն ասի՝ Արտաշը՝ ըսենց-ընենց:

(Մի կողմ): Սրանց բանը մարդ չի հասկանում: Որենք,

պրիկազ, դիտարկութեան, — եղբորս շարքային զինվոր-

ների և հասարակ մարդկանց համար ա, իսկ բարձր

դերձեր ու պաշտօնի տեր մարդկանց համար, դրանք,

կարծես գոյութիւն չունեն:

ՍԳԱ.— Ի՞նչ ես եղտեղ մըթմըթում (խմում է):

ԱՐՏԱՇ.— Վոչինչ... ասում եմ ինչի՞ յես գլուխդ կապել:

ՍԳԱ.— Մի հայ աղջկա պատճառով (խմում է):

ԱՐՏԱՇ.— Ախր, քեզ ով եր ասում, զնաս մեր աղջկեանց պատվին

դիպչես. դու չես իմանում, վոր նրանք գլուխ կկոտրեն:

ՍԳԱ.— Համենայն դեպս, իմ գլուխ կոտրողը նա չէր... բայց թե

նրա պատճառով եր... Գլուխս կոտրողն ուրիշն եր, նա

փախավ, չկա. յեթե տեսնեմ, կճանաչեմ. (խմում է)

սրանք դատարկ բան են: Լսի՛ր, դու չգիտես, մեր զին-

վորների մեջ ո՛վ է թողցիկներ տարածում:

ԱՐՏԱՇ.— Եղ ինչ բան ա, ուտելու ա՞, թե խմելու... թե վոր

գիտես խողնի ապրանք ա, բերեմ-պահեմ:

ՍԳԱ.— Խողնի ապրանք ա... բեր պահի... բայց գիտես, նրա գը-

նողը փող չի վճարում:

ԱՐՏԱՇ.— Բա ի՞նչ ա վճարում:

ՍԳԱ.— Այ ինչ է վճարում (ատրեանակի խողովակը ուղղում է նրան):

ԱՐՏԱՇ.— Դեներ կորցրու, հանկարծ կտրաքի, իչի նահատակ կը-

լինեմ... դեներ հետ խաղ անելը վտանգավոր ա. գիր

տեղը:

ՍԳԱ.— Հա՛. հա՛. հա՛. վախկոտ հայ ես... լսի՛ր, կարծիր բանակի մա-

սին դու վոչինչ չե՞ս լսել. ապստամբութեան մասին ձեր

գյուղացիներն առհասարակ վոչինչ չե՞ն խոսում:

ԱՐՏԱՇ.— Վոչինչ չգիտեմ:

ՍԳԱ.— Գուցե գիտես, բայց վախենում ես ասես. լսի՛ր, այդ ուղ-

ղությամբ հայտնածը ամենաաննշան տեղեկութեան հա-

մար դու ահագին գումար կտանաս:

ԱՐՏԱՇ.— Չեմ ուզում, չնորհակալ եմ:

ՍԳԱ.— Չարմանում եմ, թե այդ ինչ տեսակ հայ ես:

ԱՐՏԱՇ.— Յես ել ես տեսակ հայերից եմ... ինձ ասա կամպանիայի

մեջ նստի՛ր, Կախեթու կարմիր գինին դիր առաջը, ար-

դանչիկը նստեցրու կողքիդ, լաղաթին կէ՛ր, խմի՛

քեֆ արա... Թողցիկ մոռցիկ, ապստամբութիւն, մա-

պստամբութիւն, ի՛նչ իմ խելքի բանն ա... ընթափուր

դատարկ բաներ յես չեմ հասկանում... քու ասած մարդը

մեր թաղում չի ապրում, աղբիօր սխալ ա տված, դրադը

բաշի:

(խմում է):

ԱՐՏԱՇ.— Սող ըլես...

(Սպան գլուխը դնում է սեղանին և «մրավալ ժամիկը» յեր-

գում: Գալուստը գլուղացու շոքերով ներս է մտնում):

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնի և Գալուստ

ԳԱԼՈՒՍ.— Ի՞նչ արիր... իմացա՞ր:

ԱՐՏԱՇ.— Իմացա. բայց դու լավ ժամանակ չես յեկել:

ՍԳԱ.— Լսիր, Արտաշ. չե՞ս կարող գնալ գյուղից ինձ համար

մի աղջիկ բերես... այս ի՞նչ մարդ ե... օ՛վ ես դու...

դիչերվա այս պահին ի՞նչ դործ ունես այստեղ... կա-

կածելի մարդ ես յերեկում... յերեոդ շուտ տուր դեպի

ինձ...

ԳԱԼՈՒՍ.— Կնյազ ջան, դու ինձ տեսած չես ըլի... յես ես մո-

տիկ գեղի չորանն եմ... վոչխարներին մեկը կորցրել եմ

անտառում, յեկա ման յեկա, չգտա... ձմռան ցուրտ դի-

չեր ա... վոտ ու ձեռս սառել-փետացել ա, ասի մի ստա-

քան արաղ խմեմ, ջանս տաքանա, վեր կենամ, դնամ...

Լսիր Արտաշ, են մի մեչոկ կարտոշկան ել ընդի մնաց,

չեկար տանելու:

ԱՐՏԱՇ.— Դե լավ, վոր ասում ես... յես վոնց անեմ մի մեչոկ

կարտոշկի համար յես ետեղից անտեղ վեր կենամ դա՞մ

յեկողի ձեռքով կուղարկես, տես վոր կարտոշկեն լալի

ըլի:

ԳԱԼՈՒՍ.— Դու արխային կաց, լավը կլինի:

ԱՐՏԱՇ. Լավը չլինի, աչքիս չերեկամ... տեսնում ես ի՞նչ տեսակ մուշտարիներ ունեմ... բոլորը կնյաղներ են, դրանք աղ- նիվ ցեղ են... կարտոշկան մինչև վ լավ չլինի, նրանք չեն ուտի... վերցրու ես մի ստաքան արաղը խմի ու դուրս արի գնա... ել ուրիշ անգամ ես կողմերը չզա- նառեղ զինվորական պոստ ա... ուրիշ մարդկանց վոտ դնելը ես կողմերը խիտ արդելված ա... հասկացա՞ր ինչ եմ ասում, եկողի ձեռքով կարտոշկեն կուղարկես... չմոռանա՛ս...

ԳԱՂՈՒՍ. — Չեմ մոռանա, դու արխային կաց: Գնամ թե չե՝ կուղարկեմ: (Ողին խմում է. և ուզում է դուրս գնալ):

ՍՊԱ. — Սպասիր, յես իմացա դու ո՞վ ես: Նոր միայն հիշեցի (Սուլում է, զինվորները ներս են գալիս):

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնք և 1-2 զինվոր

ՍՊԱ. — Վերցրեք սրան տարեք չտար: Բայց դուռը, վոր ճանա- պարհին չփախչի: Սա բայլչելիկ է: (Բայլչելիկ անունը լսելուց 1-ի զինվորը սարսափած յետ-յետ է գնում, իսկ 2-րդ զինվորը հետաքրքրությամբ և մեծ բավականու- քյամբ նայում է):

1 **Զինվ.** — (Մոտենում է սպայի ականջին փսփսում) ձերդ սլա- ծառախալություն, յես վախենում եմ: Եդ մեր զինվորն ել մի քիչ անհուսալի մարդ ա: Թոուցիկ ա մեզ մոտ տաքա- ծում: Ճանապարհին դրանք երկուսով խոսք մեկ կանեն ու...

ՍՊԱ. — Լավ: Նրա հետ մենակ դու գնա: Իսկ դու մնա:

2 **Զինվ.** — Լսում եմ (1 զինվորը Գալուստի հետ դուրս է գնում):

ՍՊԱ. — (Արտաշին) Հրացանը նրա ձեռից վերցրու:

ԱՐՏԱՇ. — Ախր...

ՍՊԱ. — Առանց ախր-մախրի: Յես քեզ ինչ-վոր հրամայում եմ...

ԱՐՏԱՇ. — Լավ, ել մի բարկանա: Հրամանդ կկատարեմ:

(Հրացանը զինվորի ձեռքից վերցնում է):

ՍՊԱ. — Այդպես, փամփուշտն ել վերցրու:

ԱՐՏԱՇ. — Եյ, բեկեր ջան, փամփուշտներն ել տուր: Հրացանը տալուց հետո, փամփուշտները ել քեզ հարկավոր չեն: (փամփուշտները վերցնում է):

ՍՊԱ. — Այդպես: Վերցրու դրանք քեզ մոտ պահիր: **Զինվորին** կուղարկեմ կտաս նրան կրեբի: Իսկ դու առաջ ընկի: (Սպան և 2-րդ զինվորը դուրս են գնում):

ԱՐՏԱՇ. — Վոր տամ կրեբի: (Պարիկը վրայից հանում է, շինելը հագնում, հրացանը ձեռին դուրս է գնում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է վրացական շտաբը: Գիշեր է:

Տ Ե Ս Ի Լ 1

Սպա, կոմիսար, մի վրացի զինվոր և մի հայ մաուզերիստ: Սպան կոմիսարի հետ խոսում է, իսկ զինվորն ու մաուզերիստը միմիանց դեմ առ դեմ կանգնած՝ լուռ նայում են:

ՍՊԱ.— Իշխանությունը այստեղ բացակայում է: Մինչեւ իսկ միլիցիոներները չեն ճանաչում ձեր հեղինակությունը: Չեզոք զոնայում յեղած անկարգությունների մասին վո՛չ մի-աչն մենք, կվիտայեն բոլորը:

ԿՈՄԻՍԱՐ.— Մասամբ ինքներդ եք մեղավոր, վո՛չ միայն մենք: Արձակված միլիցիոներին դուք նորից ընդունում եք պաշտոնի՝ առանց մեր գիտություն: Այո, Լորդկիպանիձեն ինքն և մեղավոր ստեղծված դրություն համար:

ՍՊԱ.— Լավ է, վոր դուք ինձ հիշեցրիք: Լորդկիպանիձեն խառն իշխանության նախագիծ է մշակում:

ԿՈՄԻՍ.— Խառն իշխանության մասին նրա մշակած նախագիծը չեզոք զոնայի խնդիրը չի կարող լուծել: Ընդհակառակը, մեր փոխհարաբերությունը դրանով ավելի կտրվի:

ՍՊԱ.— Այո, այդպես: Այդ դեպքում թույլ տվեք հայտնելու, վոր սահմանագծի վրա այն ինչ-վոր արվում է մեր կողմից, դա անհրաժեշտ է և բխում է վրաց ժողովրդի կենսական շահերից: Այո, ռազմապետական տեսակետից, վրաստանը չի կարող ապրել առանց Լոռի-Փամբակի:

ԿՈՄԻՍ.— Հեռո՞:

ՍՊԱ.— Հեռո, այն, վոր դուք ինքներդ պիտի խոստովանեք, վոր հայերի շահը ևս պահանջում է այդ չըջանների վրաստանի սահմաններում լինելը: Վորովհետեւ հանձին վրաստանի՝ Կովկասում կատեղվել կենսունակ ու հզոր մի

բրիտանյա պետություն, վորը Գերմանիայի աջակցությամբ կպաշտպանի և հայերին:

ԿՈՄԻՍ.— Ահա թե ինչ: ուրեմն այդ նկատառումներով կտրուկ միջոցներ ձեռք չի առնվում անարխիան վերացնելու, վորպեսզի առիթ լինի չեզոք զոնան նորից զորք մտցնելու: Յտեսություն:

ՍՊԱ.— Յտեսություն... հա-հա-հա՛, գնացեք դուք ձեր հավերին վախեցրեք. ձեր սպառնալիքից մենք չենք վախենում:

ԿՈՄԻՍ.— Այդ մենք կտեսնենք: (Մաուզերիստի հետ դուրս ե գնում):

ԽՊԱ.— Կտեսնենք: (Չանգախարում է: Զինվորը դուրս է գալիս): Բանտարկված զինվորին ներս բեր:

ԶԻՆՎ.— Լսում եմ (դուրս է գնում): Սպան հեռախոսի խափողն առնում է ձեռը):

ՍՊԱ.— Այլո՛ւ. այո, յես եմ: Ի՞նչպես, ասում ես ինչույքն արդեն սկսվե՞լ է: Շատ բարի: Ընթացիկ աշխատանքներս կվերջացնեմ-կգամ: Ի՞նչպես: Ասում ես Նատաշան էլ այդտե՞ղ է. չառ ուրախ եմ: Վո՛չ, չեմ ուշանա: Յերկու թեթեւ գործ է: Այս մեկը թուլցիկներ տարածող զինվորն է. իսկ մյուսը կարող է ծախող հայ գյուղացին: Զգիտեմ, ինքն իրեն այդպես է անվանում: Իհարկե, հարցաքննություն ժամանակ կպարզվի: Յտեսություն: (2-րդ զինվորը ներս է մտնում):

Տ Ե Ս Ի Լ 2

Սպա և 2-րդ զինվոր

ՍՊԱ.— Ա, դու արդեն յեկար: Լսի՛ր, յեթե դու ամեն ինչ կխոստովանուկես, կյանքդ կիբրկեմ: Հակառակ դեպքում, վաղը դու պետք է գնդակահարվես: Ասա, ո՞վքեր են քո ընկերները: Կազմակերպությունը պատկանող բացի քեզանից ուրիշներն ել կան:

2-րդ. ԶԻՆՎ.— Զգիտեմ:

ՍՊԱ.— Թուլցիկները դու ումնի՞ց ես ստանում:

2-րդ. ԶԻՆՎ.— Զգիտեմ:

ՍՊԱ.— Տվածս հարցերին պատասխանիր, ապա թե չես քեզ տեղն տեղը կընդակահարեմ... չուն շան վորդի... (առթմանակոր ուղղում է նրա վրա, այդ միջոցին 1-ին զինվորը 2-րդ փոք ված ներս է մտնում):

Նույնի և 2 զինվոր

(1 զինվորը յերկար ժամանակ կակազում է և չի կարողա-
նում խոսել) :

1-ին, 2-ին, ՎՈՐ.— Զձձերդ պայծառափայլություն, բերայլ չեմք
փփփախալ...

ՍՊԱ.— Ի՞նչպես թե փախալ, չուն չան վորդի... նրա փախարեն
յիս քեզ կգնդակահարեմ...

(Ատրճանակը ձեռին մոտենում է նրան, իսկ այդ րոպե-
յից 2-րդ զինվորն առիթից ոգտվելով աննկատելի կերպով
դուրս է գնում) :

1-ին, 2-ին, ՎՈՐ.— Զձձերդ պայծառափայլություն, ինձ մի
խփիր, նենքուն խփեք, վոր չփախչի :

ՍՊԱ.— Շուն չան վորդի, քս պատճառով նա ել փախալ... բռնեք
դրան...

(Ատրճանակը ձեռին դուրս է վազում) :

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է յերկար գիծը, կամուրջի մոտ, աջ ու
ձախ անուտ : Ձմրան ցուրտ և խավար գիշեր է :

Տ Ե Ս Ի Լ 1

Գալուստ և Արամ

ԱՐՏԱՇ.— Լավ աղապակցինք :

ԳԱԼՈՒՍ.— Ի՞նչ ազատվել : Ձորս կողմից չընկալա՞նք :
Մենք նորից կարող ենք բռնվել :

ԱՐՏԱՇ.— Բռնվելու մասին դու կարող ես չմտածել : Տասը պոլկ
ստղագաթ վոր գա՝ միկնույն ա, մեզ չի գտնի : Դու արխա-
յին կաց, բայց են զինվորին վոր բռնեցին տարան՝ եղ
լավ չեյալ : Նրա խոստալուցը երեկում եր, վոր նա մեզա-
նից ա :

ԳԱԼՈՒՍ.— Բա եղ վորն ա դու չես իմացել և մինչեվ որս նրա
հետ կալ չես ստեղծել :

ԱՐՏԱՇ.— Եղ կալը հսոր ստեղծվելու յեր, բայց եկան խանգարե-
ցին, չհաջողվեց :

ԳԱԼՈՒՍ.— Ինչպես երեկում ա նրան մատնել են :

ԱՐՏԱՇ.— Են հետի զինվորը նրան մատնեց : Յես տեսա, վոր նա
աֆիցերի ականջին ինչ վոր փափաց :

ԳԱԼՈՒՍ.— Իմանայինք վորտեղ ա, դնայինք նրան ել փախցնե-
լինք : Մեղք ա : Են չանվորդի աֆիցերը նրան ապանել
կա :

ԱՐՏԱՇ.— Սը՛ն, վորի ծայն ա : (Մտնում են քիերի մեջ, բազ-
մվում) :

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնի և 2-րդ զինվոր

2-րդ, 2-ին.— Մինչեվ լուսանալը յեթե յես չկարացի պատուար-
վելու համար մի տեղ գտնել, կա՞մ գայլերն ինձ կուտեն,

կամ են անիծվածները կզան նորից կբռնեն: Ի՞նչ անեմ, ո՞ւր դնամ. թե դնամ մօտիկ գեղը, վախում եմ: Են վախած հայրն վոր պատահեցի, լավ կլինի, ինձ թվում ա թե նա հեղափոխական եր: Ուր ա թե նրան պանեցի: Ինձ թվում ա, թե նա ես անտառում մի վորեվե տեղ պահւած կլինի:

ԳԱՆՈՒՍՏ.— Լրացրեն դու հասկանում ես. լսի, տես ինչա առում:

2-ՐԴ ԶԻՆՎ.— Ինչ վոր ձեռն լավեց. գիշերվա կեսին են անտառում ուրիշ մարդ ի՞նչ գործ ունի: Անպատճառ ես են վախած հայր կլինի: Զեն տամ: Ննդիր, էյ ննդիր: Յեա վրացի վախած սարգաթ ես: Յեա քեզ հետ ուզում ա խոսի:

ԱՐՏԱՇ.— Սա են վրացի զինվորն ա. ինչպես յերեվում ա նա ել ա վախել:

ԳԱՆՈՒՍՏ.— Կանչի թող դա:

ԱՐՏԱՇ.— (Դուրս է գալիս ֆարսիի վրա կանգնում և կամաց ձայն աղիս): Վերա՞խար:

2-ՐԴ ԶԻՆՎ.— Մե վար, ամխանակո:

ԱՐՏԱՇ.— Արեթ մողի:

2 ԶԻՆՎ.— Մովդի վար, չենիճերթե: (Ուրախ ուրախ վազելով գնում է դեպի նրանց կողմը):

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնի և առաջին զինվոր

(1-ին զինվորը հրացանը ձեռին մոտենում է)

1 ԶԻՆՎ.— Ո՞վ ա եղտեղ:

ԱՐՏԱՇ.— Բարեկամ:

1 ԶԻՆՎ.— Բարեկամ-մարեկամ յես չեմ ճանաչում: Ասա ո՞վ ա:

ԱՐՏԱՇ.— Յերկաթգծի վրա նշանակված նոր սարելչիկ եմ:

1 ԶԻՆՎ.— Ով ուզում ես յեղիր: Ինձ համար մի յեղնույն ա: Տեղիցդ չջարժես թե չե կխմեմ: Դու չլիտե՞ս, վոր ես կամուրջին մօտենալու կողմնակի մարդկանց իրավունք չկա:

ԱՐՏԱՇ.— Յեա կողմնակի մարդ չեմ, յես սարելչիկ եմ:

1 ԶԻՆՎ.— Սարելչիկ չե, սվ ուզում ես յեղիր, ինձ համար միեղնույն ա, քանի չեմ խիել՝ չանատակ արել, հետոցի եղտեղից:

ԱՐՏԱՇ.— Այ մարդ, ի՞ծի ցավ դառար գլխիս. չես տեսնում վեր

եմ բնկել՝ վատա կոտրել հերիք չի, դու ել մի կռիցն ես եկել ցավիս վրա ցավ ավելացնում: Վայ դեղի ջան, մեռնում եմ... ողնեցեք, ողնեցեք...

1 ԶԻՆՎ.— Ի՞նչ ես վնասում. վեր կաց կորի՛, ետեղից սաղ բլի: ԱՐՏԱՇ.— Ի՞նչ թե կորի, սաղ բլի: Յեա քեզ ասեցի, վոր սարելչիկ եմ: Յերկաթգծի պոնեմ ստուգի: Գնացք ճի վոր-տեղ վորա կզա: Գնացքի հետ վոր մի դժբախտություն

պատահի, դու պատասխանատու ես:

1 ԶԻՆՎ.— Դու եղ ինչ տեսակ սարելչիկ ես, վոր մի Փանար ել չունես:

ԱՐՏԱՇ.— Վոնց չունեմ, քամին վիչեց Փանարս հանգրեց, և հենց դրա համար վեր բնկա՞, վատա կոտրեցի: Սպիչկա կունե-նաս, սուր Փանարս մտեմ, գնամ կորչեմ ետեղից: Թե չե՛ կմեռնեմ կման ետեղ:

1 ԶԻՆՎ.— Աս, սպիչկան վերցրու, Փանարդ վատի, վեր սա գնա ետեղից, կորե՛, սաղ բլի: Ետեղ գինվորական պոստ ա, ետեղ դու մեռնելու իրավունք չունես: (Մոտենում է և լուցկին ուզում է տա, Լույ գինվորը նրա հետեվից դաշույնը խրում է):

2 ԶԻՆՎ.— Իսկ դու մեռնելու իրավունք ունե՞ս, դե մեռի՛ր... պալաճան Հուդա... մյուս անգամ դու քո բնկերներից չմտնես: (1 զինվորը անշնչացած ընկնում է):

Դե, ել ժամանակ միք կորցնի, գինամիտի պատույթի մի ծայրը հրեն են քարի տակն ա. գնացեք, մինչեվ սրա հետ յես լո՞մ հաշիվս կվերջացնեմ:

Իջնում եմ ձորը: Ներողություն կանես, նահատակված ընկեր, յես մեղավոր չեմ: Դու քեզ եղ տեղը հասցրիր... հեղավախությունն առանց արյունի և մարդկային դահերի չի լինում: Եղ զահերից մեկն ել դու յեղիր, մնաս չունի: (Շորերը նրա վրայից հանում է, ինքն է հագնում: Վառ-ֆի ձայն): Են չան վորդի աֆիցերը գալիս ա, սրան վոր տեսի լավ չի: (Դիակը գլորում է ձորը, հրացանը վերցնում ձեռք և պոստում կանգնում: Սպան մի ֆանի զինվորների հետ գալիս է):

Տ Ե Ս Ի Լ 4

Սպա և զինվորներ

ՍՊԱ.— Սա նոր է փոխվել: Դուք գնացեք մյուս պոստը: Կրկին անգամ ձեզ զգուշացնում եմ: Աչալուրջ յեղեք, հայերը

նենդ ժողովուրդ են. նրանց հավատ ընծայել չի կարելի:
Սրանք մտադիր են ապստամբվելու: Առանց իմ ստորա-
գրութիւն կրող պրոպուստի թույլ չտաք վոչ-վոքի կա-
մուրջի մոտով անցնելու:

2 ԶԻՆՎ. — Լսում եմ: (Սպանի և զինվորները գալիս 2-րդ զինվորի
մոտով անցնում են):

2 ԶԻՆՎ. — Կնյայի լակոտ, չան վորդի: Առանց պրոպուստի էլ մենք
կգանք և մեր գործը կանենք: (Կոսմուս է և դեպի ձոր
կամաց ձայնի տալիս): Արտաշ, Արամ, Արտաշ, չուտ
արեք, վերջացրեք:

ԱՐՏԱՇ. — Արդեն վերջացրինք: (Գալուստի հետ ձորից քարձրա-
նում են):

2 ԶԻՆՎ. — Դե գնանք, թե չե նրանք նորից կգան (դուրս են
գնում):

Վ Ս Ր Ա Ք Ո Ւ Յ Ր

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԱՐԱՐՎԱԾ

Բեմը ներկայացնում է անտառ: Չմասն ցուրտ և խավար գիշեր
է: Ապստամբ գյուղացիները գեեֆը ձեռներին խարույկի շուրջը
նստած խոսում են:

Տ Ե Ս Ի Լ 1

Գալուստ, Արտաշ, Շամիլ և գյուղացիները

ԳԱԼՈՒՍՏ. — Իմ պերիալիստական պետութիւնների քաղաքակա-
նութիւնն ա: Յեթե նրանք ոգուտ չունենային մեր ներ-
քին գործերում չէին խառնվի: Ես կռիվները նրանք չե-
յին ստեղծի: Սուտ ու մուտ խոստումներով գալիս են
փոքր ազգութիւններին խաբում, գլուխները թլլում,
աչքներին հող ու մոխիր փչում և մեր յերկրի հարստու-
թիւնը հալածում: Հեաները դուրս տանում:

1 ԳՅՈՒՎ. — Դե, լա՛վ, ես փոքր ազգերի կառավարութիւնները
մեխի գլուխներ են, թե՛ սոխի գլուխներ: Բա ինչի՞ նը-
րանք չեն տեսնում, ինչի՞ չեն ձեն հանում:

2 ԳՅՈՒՎ. — Գլխներին խելք չկա՞, թե՛ հացի տեղ խոտ են ու-
տում: Ինչի՞ չեն բողոքում: Ի՞նչի յեն թույլ տալիս, վար
նրանք գան մեր յերկրի հարստութիւնը հալածեն հեռ-
ները դուրս տանեն:

ՇԱՄԻԼ. — Ես անաքանդները թամամ ուղտի ականջումը քնած են:

ԳԱԼՈՒՍՏ. — Իմ պերիալիստական պետութիւնների մեծութիւնն էլ
հենց նրանումն ա, վոր նրանք կարողանում են փոքր ազ-
գերի գլխին նստել և իրենց կամքը թելադրել:

ԲՈՒՈՐԷ. — Ինչ վոր դուզ ա, դուզ ա...

ԳԱԼՈՒՍՏ. — Ուրիշ խոսքով, նրանք ինչ տեսակ գունդա վար փը-
չում են՝ սրանք են գունդով պար են գալիս: Հայրենիքի
անվան պաշտպանութիւն տակ ընդհանուր կռիւ մեջն են
խառնվում: Ել ենքան տեղը խելքները չի կտրում, վար
յեթե ձին ու ջորին մի տեղ կովում են, քացին ելի գլխին
ա գիպչելու:

ԲՈՒՄԲԸ.— Ինչ վոր դուզ աս, դուզ աս...

ԳԱԼՈՒՍ.— Բերիչ խոսքով, նրանք ինչ տեսակ գուռնա վոր վոր-
չում են՝ սրանք են գուռնով պար են գալիս:

ԳԱԼՈՒՍ.— Ամբողջ յերկերը ավերեցին, հայության կեսը կո-
տորել ավին, ելի խելքի չեկան: Դրանք գիշեր քնած տեղն ել
յերայում ծովից ծով միացյալ Հայաստան են տեսնում, և
նրա սահմանները լեռացնելու ու մեծացնելու համար մտա-
ծում, բայց թե առվից-առու Հայաստան պահելու ուժ
չունեն:

ԽՈՒՄԲԸ.— Ինչ, վոր դուզ աս, դուզ աս... (վառփի ձայն):

ԱՐՏԱՇ.— Սաս՛, վատի ձայն աս լսում... (բոլորը վառփի յեն կանգ
նում և հրացանները ձեռքներին առնում):

ՆԱԶԻԿ.— Յես եմ, չիմեք...

ԽՈՒՄԲԸ.— Նազիկն աս...

ԱՐՏԱՇ.— Դրուստ աս վոր տելեֆոնի ապարատը բերում աս...

ՇԱՄԻԼ.— Յես չասի՞ վոր բերելու աս.

ԽՈՒՄԲԸ.— Մալաղեց Նազիկ...

1 ԳՅՈՒՂ.— Յես իմ աստվածը, ասար տղամարդ արժի...

(Նազիկ հեռախոսի ապարատը մեշտկում դրած, տղա-
մարդու հագուստ հագած ու ջարդված մեքս Ե գալիս):

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնի և Նազիկ

ՆԱԶԻԿ.— Վա՛յ, հոգնեցի... վոտքերս ջարդվեցին, չունջա կը-
տովեց... (մեշտկն ուսից վայր Ե դնում և կողքին նստում)
Բիչ եր մնացել թե բռնվեմ...

ԽՈՒՄԲԸ.— Պատմի՛, պատմի՛, հետաքրքիր աս...

(Բոլորը հավաքվում են նրա շուրջը, գետնի վրա ծալա-
պատիկ նստում և հետաքրքրությամբ լսում):

ՆԱԶԻԿ.— Յես ետեղից վոր գնացի՝ սպասեցի մինչև վոր մթնեց,
քուչում գնացող-հեղուկ վոտքը կտրվեց թե չե, մեշտկի
մեջ քիչ կարտոֆիլ լցրի, մտա կանտորը, մարդ չկար:
Նստեցի, ինչ-վոր խոսակցության ձայն եր լսվում...
դռան ձեղքից մտիկ տամ, տեսնեմ ներսում քեֆ են աս-
նում...

ՇԱՄԻԼ.— Ես քեֆում անկարելի աս վոր կնանիք չլինեյին...

ՆԱԶԻԿ.— Ճիշտ աս կանայք ել կային...

ՇԱՄԻԼ.— Չասի՞... ախր յես գիտեմ, վոր առանց կնգա, բանը
գլուխ չի գա...

ԳԱԼՈՒՍ.— Սպասի մի խանդարի... դու պատմի՛...

ՆԱԶԻԿ.— Հա, Ես ելի ասում... տեսնեմ նրանք նստած քեֆ են աս-
նում... մտածեցի, քանի գլուխները խառն աս, ժամանակ
չկուրցնեմ, անցնեմ գործի... ապարատը սեղանի վրեց
վերցրի դրի մեշտկի մեջ ու հենց ենա ուղում ելի, թե
դուրս գամ, հետեվիցս մեկը ձեն տվեց. յետ դառնամ
տեսնեմ վրացի աֆիցեբն աս: Ասում աս դու ես ժամանակ
եղտեղ ի՞նչ գործ ունես: Ասի՝ ձեզ համար կարտոչկա եմ
բերել. եղ վոր ասի, նա կատաղեց, վոտը տվեց դեմնովը
և ինչքան ուժումը կար՝ վրես դոռաց... նրա ձենի վրա
մյուսներն ել դուրս եկան ել չսպասեցի, մեշտկը տվի կոնա-
տակա ու հայդա... նրանք գլխի բնկան, թե բանը ին-
չումն աս. ասորձանակները ձեռքներին՝ կատաղած չների
պես բնկան քամակիցս և սկսեցին կրակել ու զնդակները
տղվզալով չորս կողմիցս գալիս անցնում ելին, ու չաղբու-
թյուն չեյի դարձնում... ինչքան ուժ կար վոտներումս
վաղում ելի... Ենքան արի մի կերպ ինձ գցեցի անտա-
սը... ու հմի ստաջները կանգնած եմ...

ԳԱԼՈՒՍ.— Կոցցե՛ս Նազիկ, դու խկապես վոր քաջ ես: Խոր-
հրդային իշխանությունը հաստատվելուն պես քեզ
կրասնի որդեն կտանք... (Նազիկն ուշփից գնում Ե): Ինչ
պատահեց... (Նազիկին գրկում են և նրա յերեսը շը-
փում): Շորերը արյունոտ են... Ինչպես յերեվում աս
վիրավորված աս... Նազիկ, վորտեղդ աս ցավում... (Նա-
զիկը վոտեն Ե ցույց տալիս): Վոտին աս կպել... աղերք,
աղլուխ ո՞վ ունի:

1 ԳՅՈՒՂ.— Յես ունեմ... (քաշկիմակը տալիս Ե):

11 ԳՅՈՒՂ.— Մեկից յերկու կես արա, չի հասնի...

ՇԱՄԻԼ.— Մինչև դուք իրար հետ կխոսաք, խեղճն արնաքամվել-
նի. թուղեք տեսնեմ... Նազիկ ջան, մի վախիր, բան
չկա. թող արիներ սրբենք...

ՆԱԶԻԿ.— Թողեք, չեմ ուզում, ցավում աս (լաց Ե լինում):

ԳԱԼՈՒՍ.— Վնաս չունի... քիչ կցավի... հետո կանցնի... դու-
չաղ կաց. ախր չե վոր դու հեղափոխական ես... (Նազի-
կի վոտը կապում են):

ՆԱԶԻԿ.— Քույրս տանում աս... թողեք քեմ... (թուլացած ընկ-
նում Ե):

ԳԱԼՈՒՍ.— Վնաս չունի... Բուռը տանում աս՝ քնիր... (Գրկում

ե տախտակ մի ծառի տակ դնում) : Տղերք, մի յափնջի բե-
րեք՝ գցենք վրան, չմբսի...

ԱՐՏԱՇ.—Առ իմ յափնջին դցի վրան... յես առանց յափնջու եյ
յոյա կզնամ... (յափնջին տալիս ե : Գալուստը նազիկի
պարկեցնում ե մի քփի տակ, յափնջին ծածկում վրան) :
Յերեզում ա, վոր վերքից արուն չառ ա զնացել : Վնաս
չունի, մեղից թափած ամեն մի կռթիլ արյունի տեղ
նրանցից մի վեղրու արյուն ենք քամելու... նրանց խելքն
ուր ա գնում... յես դրանց հերն անիծեմ...

ՇԱՄԻԼ.—Գրա մատին մենք հետո կմտածենք՝ մի վեղրո՞ ա հար-
կափոր, թե յերկու վեղրո : Տյա նազիկի վրա ետ ապարա-
տը բերեք սարքեր տեսնանք՝ ետ կնյազի յակոսաները
ինչ կարգադրություններ են տալիս իրանց գորքին : Ռուս-
յապոնական կոմիտէ յերկու տարի տեղեֆոնիստություն
եմ արել : Թ՛չնամու բանակից գաղտնիքներ իմանայր սո-
վորել եմ, գիտեմ...

Ի ԳՅՈՒԴ.—Յես ել գիտեմ : Ռուսաց գորքի մեջ յես ել եմ ծա-
ռայել :

ԱՐՏԱՇ.—Ել խոսալը ամենորդ ա, սարքեր պրծեք, հետո լուս-
պաղլամիչ յեղեք :

ԽՈՒՄԲԸ.—Ինչ վոր դուզ ա, դուզ ա, ... հա-հա-հա՛...

ՇԱՄԻԼ.—Ուրեմն բանից դուրս ա գալիս, վոր մեր վարպետու-
թյունը դուք թերադնահատում եք. լա՛վ... յերբ վոր
կսարքենք-կվերջացնենք, ձեզ հետ հետո կխոսենք...

ԱՐՏԱՇ.—Թե վոր սարքեցիք՝ ետքան խալիսի առաջ յես խոստա-
նում եմ ապստամբությունից հետո իմ սչոտին մի լավ
քեֆ սարքեմ :

ՇԱՄԻԼ.—Ձեռքդ տուր...

ԱՐՏԱՇ.—Գալիս ա... (իրար ձեռ եմ սեղմում) :

ՇԱՄԻԼ.—Տղերք ջան, քոմազ արեք, թե չե բանս դժվար տեղն ա
բնկել :

ԽՈՒՄԲԸ.—Ի՞նչ ա հարկավոր, առա քոմազ անենք :

ՇԱՄԻԼ.—Ամենից առաջ մափտուլ ա հարկավոր... զնացեք եզ
հեռադրաթերթից կարեք-բերեք. չո՛ւտ : (Մի քանի հոգի
գնում են) : Լսի՛ր, դու ել գնա իմացի, տե՛ս ետ հեռա-
խոսի թերթից վո՞րն ա ուղիղ գրանց նաչարնիկի կարի-
անոր գնում, մափտուլի ծայրը միացրու նրան : Լսի՛ր,
տե՛ս վոր չսխալվես, վերցնես ուրիշ մափտուլից կա-
պես...

Ի ԳՅՈՒԴ.—Ձեմ սխալվի (դուրս ե գնում) :

ՇԱՄԻԼ.—Յերկու հատ վինա ըլեր, ես ապարատը ծառի վրա
կամրացնելի :

ԱՐՏԱՇ.—Վինա վոր չլինի բանը գլուխ չի՞ դա՛ :

ՇԱՄԻԼ.—Կդա... մի կերպ յոյա վտանի... մի տերտեր, առում
են, դեղում գլնի չի ճարում, վերցնում ե չորով պատա-
րազ անում : (Բոլորը ծիծաղում են) : Ինչի եք ծիծաղում,
պատարագը՝ կուզես չորով արա, կուզես յորու ջրով
արա. միեկուն յես ա :

ԱՐՏԱՇ.—Խելքդ ի՞նչ ա կտրում, քու սարքած տեղեֆոնից յանի
մի բան դուրս կդա :

ՇԱՄԻԼ.—Գրա մատին առաջժ պատմությունը լուծ ա... ետ
հետո կտեսնենք. նազիկի վրա ապարատը դու բռնեց պինդ
պահի, քամարով կաղեմ : Վինա չեղած տեղը ես քամարն
եյ ժամանակավոր կերպով վինաի տեղը կտա...

(Արաւշը ապարատը ձեռքով պահում ե, Շամիլն ում-
բացնում ե ծառի վրա) : Հը, վո՛նց ա, ելավ թե չե. նառ-
տալաչի պարտիզանակի կարինեա. Լազան դա տեսնի,
կզարմանա...

ԱՐՏԱՇ.—Նա ել գնաց ու գնաց... նրան մի բան պատահած չլի-
նի...

ՇԱՄԻԼ.—Կարող ա պատահած ըլի, թե չե ետքան նա չեր ուշա-
նա...

ԱՐՏԱՇ.—Յեթե հնար լինել՝ ետ տեղեֆոնի ապարատը մեր կո-
միտեյի հետ միացնելի, այ ետ լազաթ կտա՛ր...

ՇԱՄԻԼ.—Ետ մեկը դու ուշացել եր... ետ ինչ վոր դու առում ես,
դա ոսպխոյի միջոցով միայն կարելի յե... Կապես հա-
սարակ ապարատով գլուխ չի դա :

(Գյուղացիները յերկաթալարերը քաշելով քերում են) :

Տ Ե Ս Ի Լ 3

Նույնի և գյուղացիներ.

Ի ԳՅՈՒԴ.—Քաշի՛, ի՛նչ ես կանգնել...

Ի ԳՅՈՒԴ.—Ապասի, ծառին դեմ ա տուել :

ՇԱՄԻԼ.—Դու ես առա, միացրի՞ր :

Ի ԳՅՈՒԴ.—Են ել վո՛նց. բայց թե փորձանքից ապաստեցինք : Քիչ
եր մնում, յետուջի ասրյաղի պահակը մեզ տեսներ...
վոր տեսներ բաններս խարար եր ըլելու...

ԳԱԼՈՒՍՏ.—Ինչի՞ ելիք ետքան մօտ գնում. գրանով դուք մեր
դիրքը վտանդի կը մտանելիք... սոսանց են ել ետեղ
իշի վրա յենք նստած. Լազարն վոր խմանա, գիտեք ձեզ
ինչ կանի... հազիվ մեզ համար ամենահարմար գիրքերն
ենք բռնել և դուք միամտաբար մեր ամբողջ ծրագիրը
պիտի փչացնեիք:

ԷԳՈՒՂ.—Մենք մեղավոր չենք... վերջին սյունը գետի են ասիին
ևր. ուղեյինք—չուղեյինք գետի են յերեսը պիտի անցնե-
լինք...

ՇԱՄԻԼ.—Դե բավ, դուք տեղը դաժմադալ միք բարձրացնի, յես
լիմ գործը արդեն վերջացրի... եկեք թամաչա արեք, Նա-
գիկի բերած կարտուշկան հմի վարակ վոր ա, լեզու ա
ստեղծու ու խոսա...

ԽՈՒՄԲԸ.—Տեսնանք քու չնորհքը... (շրջանաձևով նստում են):

ՇԱՄԻԼ.—(Լսափողը դնում է ականջին). Սուս արեք, խոսում
են... անաքանդ, դուք ես ուրիշ տեղ էք միացրել...
Բեմը մշտում է: Յերկու հակառակ կողմից մայրկայլիս
յերկու սիլվետներ հեռախոսի առաջ կանգնած միմիանց
հեռ խոսում են:

ՄԻՆԻՍՏ.—Հեռախոսի մօտ կանգնած է մինիստրը:

ԴԻՎ. ՆԵՐԿ.—Պարոն մինիստր, ձեզ հետ խոսում է Հայաստանի
գլխանադիտական ներկայացուցիչը. ստացված տեղե-
կությունների համաձայն, Բաղվում մեծամասնականե-
րը չարամիտ լուրեր են տարածում այն մասին, վոր իբր
Հայաստանում մեծամասնականները յենթարկվում են
խիստ հալածանքների, իսկ բանտում գտնվողները, չա-
փազանց ծանր բանտային ուժիմի, հաճախ թողնվում են
նույնիսկ տանց ճաշի: Ըստ նրանց տարածած լուրերի՝
միայն հրացանադարկ արվածներն թիվը հասնում է յեր-
կու հազարի... ի նկատի ունենալով, վոր այդ լուրերը
չափազանց աննպատակ սպառնալիքներ են ստեղծում հա-
տարակական և քաղաքական վերջ չըջաններում՝ մեր
կառավարութան վարկի տեսակետից, պատիվ ունեմ
խնդրելու, կարգադրեք, վորպեսպի այդ մասին մեզ
ստույգ մի տեղեկություն ուղարկվի...

ՄԻՆԻՍՏ.—Անհապաղ ստույգ ինֆորմացիա կտրվի թե՛ ձեզ և թե՛
մեր միասնային՝ Ազրբեջանում այդ լուրերը հերքելու
համար:

ԴԻՎ. ՆԵՐԿ.—Պարոն մինիստր, բացի այդ, հարկ չե՞ք համա-

րում, արդյոք, այդ մասին կառավարական հաղորդա-
ղություն հրատարակելու:

ՄԻՆԻՍՏ.—Այդ մասին կմտածենք... Առայժմ ինձ լսեցեք:

ԴԻՎ. ՆԵՐԿ.—Յես ձեզ լսում եմ, պարոն մինիստր:

ՄԻՆԻՍՏ.—Համաձայն մեր ստացած տեղեկությունների, վրաց
խլիանությունները վրաստանում ձերբակալած հայ
բաղլիվիկներին, առանց մեր կառավարութան տեղե-
կացնելու ուղարկում է Սադախու, վորտեղից նրանք
անարգել անցնում են Հայաստան: Խնդրում եմ այդ սո-
սին հայտներ վրաց կառավարութան և խնդրեք, վոր
դադարեցնեն բաղլիվիկներին մեր սպորթլաժ օղար-
կելը: Ամեն պարագային՝ պետք է, մեր անմիջապես հա-
յորդվի հայկական իշխանություններին նրանց Սադախ-
ու հատնելը, վորպեսպի հարկ յեղած գեղքում մեր կող-
մից պետք յեղած միջոցները ձեռք առնենք...

(Բեմը լուսավորվում է: Բոլորը զարմանով միմիանց
յերեսին են նայում Լազուն գաղտնահանով իր գալը հեռ-
վից իմաց ե տալիս):

ԳԱԼՈՒՍՏ.—Ընկեր Լազոն յեկավ:

(Բոլորն իսկույն իրենց կրացանները վերցնում են և շար-
քի կանգնում: Լազուն գլուզացու շորերով ներս ե գալիս):

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնի և Լազո

ԼԱԶՈ.—Բարեվ ձեզ, ընկերներ:

ԲՈՒՆՐԸ.—Բարեվ: (Առանձին առանձին բոլորը մտեկում են մը-
տերմարար նրա ձեռք սեղմում):

ԳԱԼՈՒՍՏ.—Խորհրդակցությունը ուրեմն նո՞ր ա վերջանում:

ԼԱԶՈ.—Խորհրդակցությունը ընդամենը յերկու սր տեվեց:

ԳԱԼՈՒՍՏ.—Բա ինչի՞ դու ետքան ուշացար...

ԼԱԶՈ.—Կոմիտեն կողմակերպչական աշխատանքներով ինձ ու-
ղարկեց չըջանները... և պետք է ասեմ, մեր գործը լավ
ե գնում... Ժողովրդի արամադրությունն ամբողջովին
մեր կողմն է. այժմ ամեն մի տեղ մենք գերիշած ուժեր ու-
նենք: Մեզ հետ նրանք ընդհանուր կարգադրություն են
սկսում: (Ծոցից մի ցուցակ ե հանում): Լսեք. Հաղ-
պատի բջիջն ունի իր արամադրություն ասի յերեք հաղ-

յուր հոգի: Սանահնի բջիջը՝ յերկու հարյուր: Այլահիւր-
դին՝ չորս հարյուր: Զալալողլին՝ յերկու հարյուր: Վար-
դաբլուրը՝ յոթանասուն: Վարանցովկան՝ յերկու հար-
յուր: Գյառ-գյառը՝ հարյուր յոթանասուն: Ուզունկարը՝
յերեք հարյուր (ուզում ե շարունակել, հանկարծ աչքն
բնկնում ե հեռախոսին) ևս ինչ բան ա, ևս հետախոսը
փոքրակից եք ճարել...

ԱՐՏԱՇ.—Նագիկն ա բերել... (Լագոն ու Գալուստը միմյանց հետ
կամաց խոսում են, իսկ Տիգրանը անտառի խորքից ձայն
ե տալիս):

ՏԻԳՐԱՆ.—(խորքից) Գալուստ, Արտաշ, Շամիլ:

ԳԱԼՈՒՍ.—Ես ո՞վ ա, ևս ո՞ւմ ձենն ա...

ՇԱՄԻԼ.—Կարծես Տիգրանի ձենն ա:

ԱՐՏԱՇ.—Մեղանից չի... մեր աղերքը բոլորը ըստեղ են:

Ի ԳՅՈՒՂ.—Ես դիչերվա կիսին անտառում նա ինչ ա չինում:

ՏԻԳՐԱՆ.—Գալուստ, Արտաշ, Շամիլ...

ՇԱՄԻԼ.—(բարձրանում ե ժայռի վրա և նայում ե) Տիգրան, դո՞ւ
յես:

ՏԻԳՐԱՆ.—Յես եմ:

ՇԱՄԻԼ.—Բա դենն ո՞ւր ես գնում, դեսն արի... տնաքանդը ճամ-
բեն կորցրել ա: Նա մեր դադափարի մարդ չի, մեղ մոտ
ինչի՞ համար ա դալի, չեմ հասկանում:

ԱՐՏԱՇ.—Բալբի միտքը փոխվել ա, մեր դադափարին ա յեկել,
ով ա խմանում:

ՇԱՄԻԼ.—Յես չեմ կարծում: Դա ընենց մարդ չի, վոր միտքը
փոխի:

ԳԱԼՈՒՍ.—Իրան բան միք առի: Թողեք դա տեսնենք: (Տիգրանն
առանց գլխարկի, շարքը բոլորովին պատառոտված,
դեմքն արյունոտ ներս ե մտնում. նա ուժապառ ե յեղել
և հազիվ կարողանում ե վտտի վրա կանգնել):

Տ Ե Ս Ի Լ 5

Նույնի և Տիգրան

ԼԱՁՈ.—Ինչ ե պատահել, դու վերադարձած ես... քեզնից ար-
յուն ե հոսում...

ՏԻԳՐԱՆ.—Ինձ համար միք մտածի, ընկեր Լադո. դուք պեղում

մնացած ժողովրդի համար մտածեք... նրանց հոգսը
բաշեք...

ԳԱԼՈՒՍ.—Պատմի տեսնենք, ինչ ա պատահել:

ՏԻԳՐԱՆ.—Ինչ պատմեմ. ել պատմելու բան ա մնացել: Են ար-
նախում չներր մեղ որ չեն տալիս: Նրանք մեղ տանջում-
հարչարում են: Անասելի ճեղքմեք ու լուսաթյուններ
են դորձ գնում: Գեղում ել ջահել կնիկ, չափահաս աղջիկ
չեն թողել: Գալիս դուով տնից քաշ են տալիս, տանում-
անպատվում ու բաց թողնում: Անցյալ պիչերն ել եկան
մեր տուն աղջկառ թանեցին, դուով ուզում եյին տանի,
ել չկարացի հաճրերել, կացնով տվի զուլխները ջարդեցի
ու փախա ընկա ևս չորերը... յերկու որ ա ման եմ դալի
ձեզ, չեմ դանում (ուշաքալի բնկնում ե):

ԼԱՁՈ.—Ձուր բերեք: Ուշքից գնաց: (Ամենքն զբաղվում են նրան
ուշի բերելով):

ԳԱԼՈՒՍ.—Սովածությունից կլինի. մի կտոր հաց բերեք տվեք,
թող ուտի:

(Մի կտոր հաց են բերում տալիս, վերցնում ե, ուզահա-
բար ուտում):

Տ Ե Ս Ի Լ 6

Նույնի, Բաղալ, Խաբուն, Անուշ և մի խումբ գյուղացի-
ներ ու գեղջկուհիներ

ԱՐՏԱՇ.—Հրե՛ս սրանք ել եկան:

ԳԱԼՈՒՍ.—Ես ինչ բան ա:

ԼԱՁՈ.—Գյուղում ել ո՞վ մնաց: Դուք բոլորդ տուն ու տեղ թողել
եք յեկել:

ԲԱԴԱԼ.—Տուն-տեղ վոր ունեցել եյինք, ևս անտառում մենք ինչ
ենք անում: Յեկել մեզ մի ճար արեք, մի իլաջ արեք,
յերկրի տեր ու տիրակա՛նը քանի նրանք են, նրանց ձեռ-
քին, միկնույն ա, մենք որ ու կյանք չենք տեսնի:

ԱՐՏԱՇ.—Յես չեմ հասկանում, ինչի՞ ենք նստել, ո՞ւմ ենք
սպասում:

ԲՈՒՈՐԸ.—Ապստամբությունը հմի վոր անխուսափելի ա:

ԼԱՁՈ.—Ապստամբության մասին յերկու կարծիք լինել չի կա-
րող... ևստեղ միայն ժամանակի խեղդին ե...

Ի ԳՅՈՒՂ.—Յանի չլինի, վոր ևս ժամանակը մի քիչ արա-
դացնենք:

ԱՐՏԱՇ.—Ճիշտ առաւում... առհասարակ, մենք չառ ենք ձըգ-
ձըգում ու յերկարացնում:

ՇԱՄԻԼ.—Ձգձգելու և յերկարացնելու տեղը չի... դանակը բըկ-
նեք իս դեմ առաւում... դնանք ետ չուն շանթորդ լեռերի հա-
խիցը գանք: Հերիք ա լեռքան դրանք մեզ տանջեցին...
Հերիք ա լեռքան դրանք մեր աբլեքը ծծեցին:

ԳԱԼՈՒՍ.—Ետ լեռ վոր դուք ասում եք, չառ ճիշտ ա և տեղին
ա, բայց դուք են մի բանը մոռանում եք, վոր ապստամ-
բության խնդիրը պետք և կենտրոնում վորոշվի:

ԱՐՏԱՇ.—Կենտրոնում ետ խնդիրը բայքի մի տարի չի վորոշ-
վում, ուրեմն մենք պիտի սպասենք:

ԳԱԼՈՒՍ.—Պիտի սպասենք:

ԲՈՒՈՐԸ.—Մենք համաձայն չենք:

ԼԱՁՈ.—Դուք կարող եք համաձայն չլինել... բայց մինչև կենտ-
րոնից կարգադրություն չգա, մենք իրաւունք չունենք
տեղից շարժվելու... Լոռվա ապստամբության հետ՝
Վրաստանի ապստամբության խնդիրն ևլ և կապւած. հե-
տեւապես, մեր կուսակցության և մեր վողջ կազմակեր-
պության միջամտությամբ և ղեկավարությամբ պետք և
ետ հարցը բուծվի:

ՇԱՄԻԼ.—Դե լաւ, ետ յի՞րբ ա լուծվելու:

ԼԱՁՈ.—Շատ կարճ ժամանակամիջոցում:

ԱՐՏԱՇ.—Եղ կարճ ժամանակամիջոցը մենք ի՞նչպես հասկա-
նանք... մի շարաթ, մի տարի, թե մի օր...

ԼԱՁՈ.—Ժամանակը վորոշել չենք կարող... կռիւն սկսելու հա-
մար մեզ ազդանշան կարվի:

ՇԱՄԻԼ.—Այդանշանը բայքի հենց տված ա:

ԼԱՁՈ.—Այդանշանը՝ դաժնաբանի սուլիչի յերեք անգամ կրկնվող
ձայնը կլինի: (Լսվում է յերեք անգամ կրկնվող գաղղկի
ձայնը, բոլորը խորհրդավոր կերպով լռում են):

ԱՐՏԱՇ.—Մե՛կ... յերկու... յերեք... ևս ևլ բոլ ազդանշանը:

ՇԱՄԻԼ.—Կռիվը, ուրեմն, սկսում ենք...

ԼԱՁՈ.—Սկսում ենք:

ԲՈՒՈՐԸ.—Ուրա՛... ..

(Նազիկը քնած տեղից արթնանում է և վառփի կանգնում
ու բարձր ձայնով գոչում):

ՆԱՁԻԿ.—Ուրա-ա-ա-ա՛... (Ատրեանակը ձեռին գնում միանում
նրանց: Զենք չունեցողներն սկսում են փախչել զորքի, իսկ
զենք ունեցողները դիրք են մտնում և սկսում կրակել...
հեռվից նույնպես լսվում են հրացանաձգության և քըն-
դանոթաձգության ձայներ):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՎԵՅԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է վրաց շտաբի առջեվը: Գիշեր է, խոր-
քում հրացանաձգություն: Պահակը՝ հրացանը՝ ձեռին՝ սպայի
առանձնասենյակի դուռը ծեծում է:

Տ Ե Ս Ի Լ 1

Պահակ և սպա

ՊԱՀԱԿ.—Տունը քանդվածն ընենց քեզ է ա, կասես մեռած ըլի: Մի
սհաթ ա դուռը ծեծում եմ, չի գարժեում (դուռը ծեծում
է): Ձերդ պայծառափայլություն, բայլչեվիկները դալիս
են: Վե՛ր կաց: Մեր գործը նահանջում ա: (Դուռը ծե-
ծում է):

(Սպան կիսահագնված, փաթաթախ, աչքերը տրտելով
դուրս է գալիս):

ՍՊԱ.—Ի՞նչ ասացիր:

ՊԱՀԱԿ.—Ասում եմ, բայլչեվիկները դալիս են, մեր գործը նա-
հանջում ա:

ՍՊԱ.—Լռի՛ր, սրիկա, դու չհամարձակվես նման խոսքեր մյուս
անգամ կրկնելու: Շուն չան վորդի: Գնա պահակներին
կանչի ալտեղ:

ՊԱՀԱԿ.—Պահակները չկան, ձերդ պայծառափայլություն:

ՍՊԱ.—Ի՞նչպես թե չկան:

ՊԱՀԱԿ.—Ձկա՛ն, ձերդ պայծառափայլություն: Կամուրջը վեր-
ցնելու ժամանակ՝ ապստամբները նրանց բոլորին դերի
յեն վերցրել:

(Մի խումբ վրացի զինվորների հետ 2-րդ զինվորը ներս է
գալիս):

Տ Ե Ս Ի Լ 2

Նույնի, 2-րդ և մյուս զինվորները.

ՍՊԱ.—Ահա՛ նրանք: Սրիկա, ինչո՞ւ էյիր դու ինձ խարում: Յես
քեզ տեղնուտեղը կշնդակահարեմ: Շուն չան վորդի:

(Գիմեյլով մյուս զինվորին). կանգնելու ժամանակը չի:
Գնացե՛ք դերք բռնե՛ք: Թշնամին մեզ չըջաղատել է: Նրանց
դեմ պետք է կռվել:

II ՁԻՆՎ.—Մենք կռվելու մտադրություն չունենք: Նրանք մեզ
թշնամիները չեն: Նրանք մեր բարեկամներն են, նրանք
մեր ընկերներն են:

ՍՊԱ.—Այդ դո՞ւ յես... յես քեզ տեղնուտեղը կշնդակահարեմ:
Հայրենիքի դավաճան (ատրեանակը ուղղում է նրա վրա):

II ՁԻՆՎ.—Գնդակահարիր տեսներ: (Զինվորները սվիններով
նրան սպանում են): Կնյադի լակոտ, չան վորդի, ... դե
գնա, հուպես ստակիր...

ՊԱՀԱԿ.—Ես ի՞նչ արե՛ք: Բա վոր ձեզ պատժե՞ն:

II ՁԻՆՎ.—Ո՞վ պետք է մեզ պատժի: Եվ պատժողները դնացին
մեռան, պրծան, կարմիր բանակը մեր հետևի՛ն սարի նը-
ման կանգնած ա, հսոր եզուց մենչեվիկներին կառավա-
րությունը կոտորվենք և իշխանությունը կանցնի մեր
ձեռը: Հրեն, կարմիր բանակը կռվում ա, դնանք ոգներ:

ՊԱՀԱԿ.—Գնանք, յես ել եմ ձեզ հետ գալիս:

(Ուսողիքները պահում և նրանց հետ դուրս է գալիս):
(Կոմիսարին, պրիստավին, կամարին, գլավին, կառա-
վարիչին և մասնագետներին ապստամբ գյուղացիները
շրջապատած բերում անց են կացնում):

Տ Ե Ս Ի Լ 3

Գալուստ, Արտաշ, Շամիլ, Բադալ, Խաթուն, Անուշ,
Նազիկ, ապստամբ գյուղացիներ.

ԳԱԼՈՒՍՏ.—(Ժողովրդին) Հեռացե՛ք:

ԲՈՂՈՐԸ.—Թողե՛ք դրանց դատաւորներ մենք մեր ձեռքով ա-
նենք:

ԲԱԴԱԼ.—Հերիք ա, դուք մեր միտը կերպք, դուք մեր արվնը
խմեցիք:

ԽԱԹՈՒՆ.—Դե, հմի դնացե՛ք, աչքներդ դուրս դա:

ԲՈՂՈՐԸ.—Գնա՛նք դու, գալիք չի: Հողս ձեր գլխին:
(Դուրս են գնում: Խորքում հրացանաձգություն, ուռու-
ների, կեցցեների և յերածշուրթյան ձայն):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր



տի 1
թի 2

ԳԻՆԸ 75 ԿՈՊ. (51/4d.)

278

259



ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐՏԱՆՅԱՆ

ՍԻԳՆԱԼ

Պիես

Գոսիզդատ ՍՍՐ Արմենի
Երևան 1931

0

ՀՀ Ազգային գրադարան



NL0369530

56.913